ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

«07» հոկտեմբերի 2018թ

Թիվ 169

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն մարզպետ*

Ձեզ ենք ուղարկում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի 2018թվականի հոկտեմբերի ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր <<13>> թերթ.

Համայնքի ղեկավար S. Բաղդասարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.93/20521-18
«08» 11 2018թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 4շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«03 » հոկտեմբերի 2018թվականի N 76-Ա

### ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 12-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012թվականի հունվարի 18-ի <<Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին>> N 9 որոշումը.

*Որոշում եմ՝*

1.Սամվել Պետրոսի Շահբազյանի անվամբ 0.12հա տնամերձ հողամասին (ծածկագիր 04-066-0037-0002)տալ հասցե՝<<Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ Մյասնիկյան համայնք 3-րդ փողոց N 33>> հասցեն:
2.Սույն որոշումն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2018 թվականի, հոկտեմբերի 3,
Մյասնիկյան համայնք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 4շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

«24 » հոկտեմբերի 2018թվականի N 77-Ա

### ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 12-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012թվականի հունվարի 18-ի <<Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին>> N 9 որոշումը.

*Որոշում եմ՝*

1.Արմեն Ռուբիկի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Բնակարանին (հիմք՝ սեփականության վկայական՝ 1989160) տալ հասցե՝ <<Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ Մյասնիկյան համայնք 12-րդ փողոց 8շենք N 5 բնակարան>> հասցեն:
2.Սույն որոշումն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2018 թվականի հոկտեմբերի 24
Մյասնիկյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հոկտեմբերի 2018թվականի N 78-Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով, 15-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1834-Ն որոշումը և ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 15-ի N 58-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

*1.Համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերի՝*

1)Լոտ 1՝ 04-066-0195-0040կադաստրային ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 0.075հա այլ հողատեսք

2)Լոտ 2՝ 04-066-0129-0077կադաստրային ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 0.015հա այլ հողատեսք

3)Լոտ 3՝ 04-066-0020-0003 կադաստրային ծածկագրի բնակավայրերի նշանակության 0.098հա այլ հողեր

4)Լոտ 4՝ 04-066-0008-0042 կադաստրային ծածկագրի արտադրական նշանակության 0.028հա պահեստարանների հողեր

*աճուրդն անցկացնել 20178թվականի նոյեմբերի 27-ին, ժամը $10^{00}$-ին:*

*2.Աճուրդային կարգով օտարման մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով, նախավճարը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով, քայլի չափը հաշվել մեկնարկային գնի 5%-ի չափով:*

*3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

*Համայնքի ղեկավար՝* *Տ.Բաղդասարյան*

*2018թվականի հոկտեմբերի 24,*
*Համայնք Մյասնիկյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«30» նոյեմբերի 2018 թվականի N 79-Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N12-Ն հրամանը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-1)համայնքային ծառայության թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնել 2018 թվականի դեկտեմբերի 3–ին, ժամը՝ 12$^{00}$-ին:

2. Մրցույթի նախապատրաստման աշխատանքները իրականացնել «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և ժամկետով:

3..Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Մյասնիկյան համայնքի ղեկավար՝* Տ.Բաղդասարյան

*2018 թվականի նոյեմբերի 30,*
*Մյասնիկյան համայնք*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«30» հոկտեմբերի 2018թ. N 80 -Ա

## ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու մասին» N 13-Ն որոշմամբ հաստատված N1 և N2 հավելվածների 8-րդ կետը, հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար 2018 թվականի դեկտեմբերի 3-ին մրցութային հանձնաժողովում լիազորված անձ նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գնորգ Գրիգորյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2018 թվականի հոկտեմբերի 30,
Մյասնիկյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան Համայնք, Մյասնիկյան փող. 4 շենք,
Հեռ. 0233-74-6-73 Էլ. Փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

«01» հոկտեմբերի 2018թ. | Կարգադրություն N 39-Ա

## ՏԻԳՐԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, 161-րդ և 164-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1384-Ն որոշման N1 հավելվածի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 11-ի N 3-Ա որոշմամբ հաստատված հավելվածը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավար՝ Տիգրան Բաղդասարյանին տրամադրել ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ՝ 24 աշխատանքային օր տևողությամբ / 20 աշխատանքային օր նվազագույն, 4 աշխատանքային օր լրացուցիչ/:
2. Տիգրան Բաղդասարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա լիազորությունների իրականացումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գևորգ Գրիգորյանին:
3. Տիգրան Բաղդասարյանին աշխատանքի մեջ համարել 2018 թվականի նոյեմբերի 2-ին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ S. Բաղդասարյան

«01» հոկտեմբերի 2018թ.

Հ. Մյասնիկյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան Համայնք, Մյասնիկյան փող. 4 շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ. Փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«01» հոկտեմբերի 2018 թվականի N 40-Ա

## ԱՎԵՏԻՍ ՏՈՆՈՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Մյասնիկյան համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 13-ի N 49 որոշումը.

### ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի անասնաբույժ նշանակել՝ Ավետիս Աշոտի Տոնոյանին:
2. Կողմերի միջև կնքել աշխատանքային պայմանագիր՝ համատեղության կարգով:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ S. Բաղդասարյան

<<01> հոկտեմբերի 2018թ

Հ. Մյասնիկյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

---

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«01» հոկտեմբերի 2018թվականի N 41-Ա

## ՄԱՐՏՈՒՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Մարտուն Սահակյանի 2018թվականի հոկտեմբերի 1-ի անձնական դիմումը.

*Կարգադրում եմ՝*

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի համայնքապետարանի և երաժշտական դպրոցի վարչական շենքի պահակ նշանակել Մարտուն Սահակյանին:

2. Կողմերի միջև կնքել աշխատանքային պայմանագիր:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2018թվականի հոկտեմբերի 1,
Մյասնիկյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան Համայնք, Մյասնիկյան փող. 4 շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ. Փոստ myasnikyan.armavir@mta.gov.am


# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«09» հոկտեմբերի 2018 թվականի N 42-Ա

## ՎԱՐԴՈՒՀԻ ՎԱՀՐԱՄԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդուհի Վահրամի Հովհաննիսյանի 2018թվականի հոկտեմբերի 9-ի անձնական դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի գրադարանի գրադարանավարուհի՝ Վարդուհի Վահրամի Հովհաննիսյանին համարել աշխատանքի մեջ:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ. Բաղդասարյան

<<09>> հոկտեմբերի 2018թ

Հ. Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան Համայնք, Մյասնիկյան փող. 4 շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ. Փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«09» հոտեմբերի 2018 թվականի N 43-Ա

## ԱՐՄԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով նախքին աշխատողի վերադարձը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի գրադարանի գրադարանավարուհի՝ Արմինե Ավետիսյանի հետ լուծել ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար S. Բաղդասարյան

<<09>> հոկտեմբերի 2018թ
Հ. Մյասնիկյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան Համայնք, Մյասնիկյան փող. 4 շենք,
Հեռ. 0233-74-6-73 Էլ. Փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«10» նոյեմբերի 2018 թվականի N 44-Ա

### ՌԻՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 26 ապրիլի 2011թ-ի N416-Ն հրամանով հաստատված հավելվածի 2-րդ բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետը և Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու 2018թվականի սեպտեմբերի 13-ի N51-Ա որոշումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2018 թվականի նոյեմբերի 15-ին լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի <<Մյասնիկյանի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Ռիտա Մանուկյանի հետ կնքած անորոշ ժամանակով աշխատանքային պայմանագիրը:
2. Գլխավոր մասնագետ՝ / Լ.Սմբատյանի/ օրենքով սահմանված կարգով վճարել վերջնահաշվարկ:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար S. Բաղդասարյան

<<10>> նոյեմբերի 2018թ
Հ. Մյասնիկյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 11 ,հեռ.0233 74 6-73

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 15 » հոկտեմբերի 2018 թվականի N 45-Ա

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-դ կետով,հիմք ընդունելով Մյասնիկյան համայնքի ղեկավարի 2018թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 44-Ա կարգադրությունը, <<Մյասնիկյանի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում հանձման աշխատանքներ կազմակերպելու նպատակով.

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել մանկապարտեզի տնօրեն՝ Ռիտա Մանուկյանին:
3. Սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 3-օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
4. <<Մյասնիկյանի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության գույքի , փաստաթղթերի , կնիքի պատասխանատու ժամանակավոր նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գ.Գրիգորյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար S. Բաղդասարյան

2018թվականի հոկտեմբերի 15
Մյասնիկյան համայնք

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի*
*ղեկավարի 2018թվականի նոյեմբերի 15-ի*
*N 45-Ա կարգադրության*

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Գևորգ Գրիգորյան — Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ

Լ.Սմբատյան — Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանի գլխավոր մասնագետ

Ս.Մաղաքյան — Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանի առաջատար մասնագետ

Լ.Սերոբյան — Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Խաչատրյան